ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
ՊԵՏ

0041 Երևան, Հայաստանի Հանրապետություն
Էրեբունի փողոց, 12

Հեռ./ֆաքս՝ (+374 10) 45 09 60
Վեբ կայք՝ www.ssfs.am
Էլ. փոստ՝ head@ssfs.am

N 1538 / 12.09. 2012թ.

<<ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՀԿ-Ի ԻՐԱՎԱԲԱՆ
ՊԱՐՈՆ Գ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր 31.08.2012 թվականի
N 178-ի 6 գրության

Հարգելի պարոն Հայրապետյան

ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության /այսուհետ՝ Ծառայություն/ պետի 2012 թվականի հուլիսի 23-ի N 151-Ա հրամանով Ծառայության կողմից իրականացվել է Երևան քաղաքում շուկայահանված փաթեթավորված պաղպաղակի դիտարկում և չփաթեթավորված պաղպաղակի պահպանման, տեղափոխման և իրացման գործընթացների ուսումնասիրություն:

Պաղպաղակի նկատմամբ դիտարկում կատարվել է 78 տնտեսավարող սուբյեկտներում: Փողոցային առևտրի միջոցով չփաթեթավորված պաղպաղակի իրացում շարժական լիցքավորվող սառնարաններով հայտնաբերվել է 3 դեպք (անվտանգությունը հիմնավորող որևէ փաստաթուղթ չի ներկայացվել, վաճառողներն էլ տնտեսավարող սուբյեկտի կարգավիճակ չեն ունեցել):

Դիտարկման ընթացքում մակնշման պահանջներին և պահման պայմաններին չհամապատասխանող սննդամթերքը հանվել է վաճառքից:

Դիտարկումների արդյունքում հայտնաբերված անհամապատասխանությունները, որոնք պայմանավորված են արտադրող կազմակերպությունների գործունեությամբ, հաշվի կառնվեն Ծառայության կողմից պետական վերահսկողության կազմակերպման գործընթացում և այդ կազմակերպությունների նկատմամբ ստուգում իրականացնելիս:

Ստորև աղյուսակի տեսքով ներկայացվում են դիտարկման արդյունքները:

Առդիր՝ 6 էջ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Ա. ԲԱԽՉԱԳՈՒԼՅԱՆ

Կատ՝. Ա. Բաղալյան
Հեռ՝ 29-74-30